

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԻՆչ Ե մրցունակությունը և ինչո՞ւ Ե այն կարևոր

Մրցելու ձգտումը մարդկային էության մի մասն է կազմում, և մենք ապրում ենք այնպիսի աշխարհում, որտեղ մրցակցությունն ազգերի, ընկերությունների և մարդկանց միջև փոխհարաբերությունների հիմնական ճանապարհներից մեկն է: Դրանք բոլորը մրցակցում են՝ ձեռք բերելու ավելի շատ առավելություններ կամ հաղթանակներ, ավելի մեծ իշխանություն և առավել հզոր լծակներ, շուկայում առավել խոշոր մասնաբաժին կամ օգուտներ և առավել բարձր կենսամակարդակ: Տնտեսական գործոնների հետզհետե ակտիվացող շարժունակության, տեխնիկական զարգացման և առավել լայն ու արագ հաղորդակցման մրցակցությունը մեր ժամանակներում դառնում է առավել թեժ և բարդ: Հետևաբար, «մրցունակության» գաղափարը դառնում է չափազանց կարևոր և լայնորեն կիրառվում ու մեկնաբանվում:

«Ինչ է իրենից ներկայացնում մրցունակությունը» հարցի ամենահիմնական և պարզ բացատրությունն իր մեջ ներառում է այդ գաղափարն առավել համապարփակ ձևով հասկանալու բանալին. մրցունակությունը մրցելու կարողությունն է, այսինքն՝ մյուսների նկատմամբ առավելություններ և հաղթանակներ ձեռք բերելու և հաստատուն կերպով զարգացնելու կարողություն: «Կարողություն» բառն այն բանալին է, որն օգնում է հասկանալ այդ գաղափարը և խուսափել սխալ մեկնաբանությունից:

Մրցունակություն տերմինը տարբեր իմաստներով է գործածվում: Հետևաբար, կարևոր է նախ և առաջ մի պահ կանգ առնել և հասկանալ, թե ինչի մասին է խոսքը: Մրցունակություն չի նշանակում լոկ առևտրային դրական հաշվեկշիռ: Այն չի օգնում երկրին առավել խոշոր ծավալի արտահանումներ կատարել, եթե սովյալ երկիրը մրցակցում է իր սեփական կենսամակարդակի հաշվին:

Ոմանք ազգի մրցունակությունը կապում են մեծածավալ կամ էժան տնտեսական գործոնների և աշխատուժի առկայության և բարենպաստ աշխարհագրական դիրքի հետ: Այդպիսիք հակված են մրցունակությունը կապել էժան տնտեսական գործոնների, աշխատուժի և արժեզրկված արտադրության հաշվին բազմազգ կորպորացիաների արտադրական միավորների ավելի էժան աշխատուժ ունեցող երկրներ տեղափոխման հետ կամ էլ կապում են հումքի, բազային ապրանքների և ցածր տեխնոլոգիաներով ստացված արտադրանքի արտահանման հետ: Առաջնորդվելով այս գիտակցությամբ՝ կառավարությունները կարող են մեծածավալ լրավճարներ տրամադրել արտահանողներին, նախատեսել բարենպաստ մաքսային ռեժիմ կամ հարկերից ժամանակավոր ազատում և վերացնել տուրքերը՝ խթանելու համար ներքին ընկերությունների միջազգային մրցունակությունը գլոբալ շուկայում՝ ցածր գներով բազային ապրանքների հիման վրա:

Մրցունակություն ամենևին էլ չի նշանակում հարուստ բնական ռեսուրսների առկայություն: Չնայած որ շատ երկրներ ներկայումս մեծ օգուտներ են ստանում նավթի և բնական ռեսուրսների առավել բարձր գներից, սակայն երկարաժամկետ կտրվածքով նկատվել է բնական ռեսուրսների գների նվազման միտում: Իրենց բարեկեցությունը ապահովելու համար հիմնականում բնական ռեսուրսների շահագործման վրա հույս դրած երկրների մեծ մասը ժամանակի ընթացքում չի կարողացել ավելի բարեկեցիկ դառնալ: Հարուստ բնական ռեսուրսների առկայությունն, իհարկե, շատ լավ է, սակայն դա երբեմն օրհնության փոխարեն դարձել է անեծք:

Մրցունակությունը նույնպես չի ենթադրում էժան աշխատուժի առկայություն: Սխալ կլինի ասել, որ երկիրը մրցունակ է, քանի որ իր աշխատուժը ցանկանում է ցածր աշխատավարձով աշխատել: Մրցունակ պետություններում աշխատավարձը բարձր է, իսկ ոչ մրցունակ պետություններում աշխատավարձը ցածր է կամ վերջինիս չափը գնալով նվազում է: Դա պայմանավորված է նրանով, որ գլոբալացող տնտեսության մեջ աշխատանքի գնի շուրջ մրցակցել նշանակում է չափազանց ցածր վճարվող աշխատանքի հետ մրցելն այնպիսի երկրներում, ինչպիսիք, օրինակ, Չինաստանն ու Ինդոնեզիան են:

Ոմանք էլ խոսում են մրցունակության մասին ազգային արժույթի փոխարժեքի շուրջ: Երկարաժամկետ կտրվածքով լոկ արժույթի արժեզրկումը չի կարող բերել մրցունակության: Ոմանք էլ մրցունակության անհրաժեշտության մասին խոսում են՝ որպես կառավարության կողմից պաշտպանու-

թյան կամ լրավճարների արդարացման համար: Թեպետ երկու դեպքում էլ որոշ բիզնեսներ ժամանակավոր օգուտներ են ստանում, երկուսից և ոչ մեկն էլ չեն հանդիսանում մրցունակության երկարատև և շարունակական աղբյուրներ:

Այնուհանդերձ, այս մոտեցումը չի նպաստում և չի խրախուսում տեղական ընկերություններին միջազգային մրցակիցների նկատմամբ կայուն մրցակցային առավելություն ստեղծելուն, և երկարաժամկետ կտրվածքով այն պահանջում է առավել մեծ ծավալի լրավճարներ և նույնիսկ աշխատավարձի նվազեցում՝ պահպանելու արտահանման ծավալների ընթացիկ մակարդակը: Այն ստիպում է երկրներին իրենց ռեսուրսները և աշխատուժը հնարավորինս երկար ժամանակով պահպանել ցածր գներով: Այլ կերպ ասած՝ այն հանգեցնում է մի իրավիճակի, ուր երկրները մրցակցում են «տեսնելու, թե որ երկիրն առավել երկար ժամանակով կմնա ամենաաղքատը»¹, այդպիսով չկարողանալով բարեկեցիկ կյանք ապահովել քաղաքացիների համար և հիմքեր ստեղծել տեխնոլոգիական զարգացման համար: Այսպիսով՝ այնպիսի մրցակցային առավելությունները, ինչպիսիք են մեծ ծավալով բնական ռեսուրսները կամ էժան աշխատուժը, չեն կարող երկարաժամկետ կտրվածքով երաշխավորել պետության մրցունակությունը: Դրանք «սկսել են չեզոքանալ, իսկ մրցակցային առավելությունների էությունը՝ արագ կերպով փոփոխվել»²:

Տնտեսության ընդհանուր արտադրողականությունը կարող է բարձրացվել առավել մեծ ծավալով իր սեփական աշխատուժի օգտագործմամբ. այն, ինչ Իռլանդիան մեծ հաջողությամբ է իրականացրել: Այս ամենից գատ՝ կարևոր է բարձրացնել նաև միջին աշխատողի արտադրողականությունը: Արտադրողականությունը հնարավոր է բարձրացնել արտադրական գործընթացների արդյունավետության ապահովմամբ, և դա հաճախ կոչվում է գործառնական արտադրողականություն: Արտադրողականությունը կարելի է բարձրացնել նաև բիզնեսների կողմից կատարվող այն ռազմավարական ընտրություններով, թե որտեղ և ինչպե՞ս մրցակցել: Դա հաճախ անվանում են *ռազմավարական արտադրողականություն*:

Մրցակցությունն իր մեջ ընդգրկում է աճող արդյունավետություն, ինչպես նաև նորարարություն: Մրցունակությունը խթան է հանդիսանում գլոբալ տեխնոլոգիական զարգացման և գլոբալ արժեքի ստեղծման համար, և այդպիսով այն ստեղծում է համագործակցության համար առավել բարենպաստ հենքեր:

Ըստ Մայքլ Պորտերի և այլ հետազոտողների՝ մրցունակությունը կապված է ճյուղային քլաստերների զարգացման հետ: Ժամանակի ընթացքում մի շարք ընկերություններ զարգանում են կապակցված և օժանդակող ճյուղերի օժանդակությամբ: Սիլիկոնային հարթավայրը ՏՏ քլաստերի լավագույն օրինակներից է: Հյուսիսային Իտալիան զուգորդվում (ասոցացվում) է բարձրորակ հագուստի և կոշիկեղենի հետ: Ստեղծելով բարձրակարգ գործարար միջավայր՝ կառավարությունները կարող են հենք ստեղծել մրցունակ քլաստերների առաջացման համար:

Մրցունակությունն, այսպիսով, առավել կապված է երկրի կարողության և ոչ թե սեփական ռեսուրսների առկայության հետ: Այն կապված է երկրի կարողության հետ ստեղծելու համակարգ կամ միջավայր, որը հնարավորություն է տալիս ձեռնարկություններին և քաղաքացիներին՝ արդյունավետ կերպով օգտագործել երկրի ռեսուրսները և տնտեսական գործոնները: Այն կապված է երկրի, իր ձեռնարկությունների և քաղաքացիների բարձր գործառնականություններ և ռազմավարություններ մշակելու և իրականացնելու կարողության հետ, ինչը հնարավորություն կընձեռի արդյունավետ կերպով օգտագործել իր առկա ռեսուրսները և տնտեսական գործոնները: *Այլ կերպ ասած՝ մրցունակությունը կապված է արտադրողական կարողության հետ:*

Կայուն տնտեսական միջավայրը, մեծածավալ տնտեսական գործոնների առկայությունը, աշխարհագրական դիրքը տվյալ ազգի մրցունակության համար անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայմաններ են, քանի որ «բարեկեցիկ կենսապայմանները ժառանգաբար չեն փոխանցվում, այլ ստեղծվում են» երկրի առանձին ընկերությունների ռազմավարական ընտրություններով³: Մակրոտնտեսական կայունությունը հնարավորություն կընձեռի առանձին ընկերություններին գործել կանխատեսելի միջավայրում, իսկ մեծածավալ ռեսուրսների առկայությունը հնարավորություն կընձեռի արագ կերպով օգտվել անհրաժեշտ ներդրանքներից: Այն արտադրողականությամբ, որով ընկերությունն օգտագործում է բարձր գործառնականությունների և ընդունված ռազմավարությունների հիման վրա առկա ռեսուրսները, ցանցերը և այլ միջոցները պայմանավորված է երկրի գործարար միջավայրի որակից, որը բարձրացնում է մասնավոր հատվածի մրցունակությունը⁴: Այսպիսով՝ միայն մակրո և միկրոտնտեսական կայուն հիմքերի համատեղ առկայության դեպքում ընկերությունը

հնարավորություն կունենա անընդհատ նորարարություններ կատարել (նոր ապրանքի նախագծում, արտադրական գործընթաց, շուկայավարման մոտեցում և այլն) և արդիականացման միջոցով պահպանել մրցակցային առավելությունը⁵ :

Մրցունակ ընկերությունները, որոնք հաջողության են հասնում տեղական սուր մրցակցության պայմաններում, առավել մեծ կարողություններ ունեն արտահանում իրականացնելու: Գլոբալ մասշտաբով մրցունակ, «կատարելագործված» ընկերությունները մշակում են յուրօրինակ և տեխնիկապես բարդ ապրանքներ, ներդրումներ են կատարում օտարերկրյա հաճախորդների նախապատվությունները հասկանալու համար, ինչպես նաև աշխատողներին վերապատրաստելու և պահպանելու համար, ինտեգրված են գլոբալ շուկաներին, ակտիվ կերպով կիրառում են շուկայահանման միջոցներ և վերահսկում են իրենց ապրանքների և ծառայությունների միջազգային բաշխման ուղիները⁶ : «Կատարելագործված» ընկերությունների հետզհետե ավելացող արտահանումներից ստացվող եկամուտն ապահովում է մեծ հատույցներ արտադրողական ներդրումներից և ստեղծում հարստություն այն երկրի համար, որտեղ նրանք գործում են: Միջազգային ամենաբարձր չափանիշներին հասնելու և արդիականացված տեխնոլոգիաներ ստեղծելու անհրաժեշտությունը հանգեցնում է նորարարության և շարունակական ու կայուն զարգացման:

Այսպիսով՝ մրցունակությունը կապված է կոնկրետ երկրի քաղաքացիների համար բարեկեցիկ պայմաններ և հետագա զարգացման համար կայուն հիմքեր ստեղծելու հետ: Այն հնարավորություն է տալիս բարելավել «միջին քաղաքացիների» բարեկեցությունը և հանդիսանում է տնտեսական զարգացման յուրօրինակ միջոց, որից օգուտ կբաղեն հասարակության բոլոր անդամները:

Աղյուսակ 1. Արտադրողականությունը որպես մրցունակության շարժիչ ուժ



Աղբյուր՝ Գամաշխարհային տնտեսական ֆորում, 2004թ.

Մրցունակ երկրների կամ ձեռնարկությունների նորարարություններ մտցնելու և շարունակաբար զարգանալու, ինչպես նաև գլոբալ մասշտաբով մրցունակ լինելու ձգտումն իր հերթին ապահովում է միջազգային մրցակցություն և հանգեցնում է միջազգային չափանիշների բարձրացմանը, ապրանքների և ծառայությունների որակի արդիականացմանը, նաև նպաստում է աշխարհում տեխնոլոգիական զարգացմանը: *Ըստ այսմ՝ մրցունակությունը կապված է գլոբալ տեխնոլոգիական զարգացմանը նպաստելու և արժեքների ստեղծման գլոբալ շղթայում մասնակցություն ունենալու հետ:*

Մրցունակության որոշ սահմանումներ

Մրցունակությունը որոշվում է այն արտադրողականությամբ, որով երկիրը, տարածաշրջանը կամ քլաստերն օգտագործում է իր մարդկային և բնական ռեսուրսները և կապիտալը: Արտադրողականությամբ սահմանվում է պետության կամ տարածաշրջանի կենսամակարդակը (աշխատավարձ, կապիտալից ստացվող եկամուտ, բնական ռեսուրսներից ստացվող եկամուտ):

Մայքլ Դորտեր (1990, 1998)

Ազգային մրցունակությունը տնտեսական գործոնների, քաղաքականությունների և ինստիտուտների համակարգ է, որով սահմանվում է երկրի արտադրողականության մակարդակը: Արտադրողականության բարձրացումը, այսինքն՝ առկա գործոնների և ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործումը, ներդրումներից ստացվող հատույցի շարժիչ ուժն է, որն իր հերթին որոշում է տնտեսության համախառն աճի տեմպը: Այսպիսով՝ առավել մրցունակ է համարվում այն տնտեսությունը, որն առավել արագ կգարգանա միջին և երկար ժամկետում:

Համաշխարհային տնտեսական ֆորում (2004)

Երկրի մրցունակությունը կարող է սահմանվել որպես միջազգային շուկայում համանման տնտեսական զարգացմամբ պետությունների շարքում պետության համեմատական մրցակցային դիրք:

Մուն և Չո (1998)

Պետության մրցունակությունը նշանակում է, թե ինչքանով այն կարող է ազատ և արդար շուկայական պայմաններում արտադրել ապրանքներ և ծառայություններ, որոնք անցնում են միջազգային շուկաների քննությունը՝ միաժամանակ մեծացնելով իր քաղաքացիների եկամուտը: Ազգային մակարդակով մրցունակությունը հիմնված է արտադրողականության բարձր ցուցանիշների վրա:

Մրցունակության հարցերով նախագահական հանձնաժողովի հաշվետվություն՝ գրված Ռեյգանի վարչակազմի համար (1984)

Ազգային մրցունակությունը կապված է երկրի ներսում կամ միջազգային առևտրում ծառայության համար ապրանքներ ստեղծելու, արտադրելու, բաշխելու տվյալ երկրի կարողության հետ, որը իր ռեսուրսներից հետզհետե ավելացող եկամուտներ է ստանում:

Սկոթ և Լոջ (1985)

ԱՄՆ կոնգրեսի կողմից ստեղծված Մրցունակության քաղաքականության հարցերով ԱՄՆ խորհուրդը սահմանել է մրցունակությունը որպես միջազգային շուկաների քննությունն անցնող և կենսամակարդակի բարձրացմանը հանգեցնող ապրանքներ և ծառայություններ ստեղծելու կոչված տնտեսության կարողություն:

¹ Ֆեյրբենքս, 2000թ.

² Միտելկա և այլք, 2004թ., Էրնսթ և այլք, 1997թ.

³ Պորտեր, 1990թ.

⁴ Պորտեր, 1990թ.

⁵ Պորտեր, 1990թ.

⁶ Ֆեյրբենքս, 2000թ., Պորտեր 1990թ., Սալա-ի-Մարտին, 2004թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀՏՖ-ի մեթոդաբանության նկարագրություն

Համաշխարհային մրցունակության ցուցիչ (ՀՄԻ)

ՀՏՖ-ի մեթոդաբանության համաձայն՝ (աղապատացված Մայք Պորտերից) գոյություն ունի տնտեսական զարգացման 3 փուլ (տեսն նկար A1): Զարգացման առաջին փուլում (ռեսուրսների վրա հիմնված փուլ) մրցակցությունը պայմանավորվում է բնական ռեսուրսների առատությամբ, էժան աշխատուժով և այլն: Ընկերությունները արտադրում են ցածր ավելացված արժեք ունեցող ապրանքներ (բազային ապրանքներ, հումք, հանքա-հումքային արդյունաբերության մասնաբաժինը ապրանքների արտահանման մեջ կազմում է մեծ տոկոս): Մրցակցությունը պայմանավորված է ցածր ծախսերով, որն արտացոլում է տվյալ ազգի արտադրողականության ցածր մակարդակը: Երկարաժամկետ ժամանակահատվածում այս զարգացման փուլում գտնվող երկրները պետք է բարձրացնեն ինստիտուտների արդյունավետությունը (հենասյուն 1), բարելավեն ֆիզիկական ենթակառուցվածքների ներկայիս վիճակը (հենասյուն 2), բարձրացնեն մակրոտնտեսական կայունությունը (հենասյուն 3), և ներդրումներ կատարեն աշխատուժի առողջական վիճակը և տարրական կրթության որակը ամբողջ տնտեսության գործունեությունն ապահովելու համար (հենասյուն 4), (տեսն նկար A2).

Նկար A1. Զարգացման երեք փուլերը



Աղբյուր՝ Համաշխարհային տնտեսական ֆորում, 2004թ., 2007թ.

Երկրների զարգացմանը զուգընթաց դրանք մտնում են երկրորդ փուլ (արդյունավետությամբ պայմանավորված փուլ): Այս փուլում ընկերությունները պետք է արդիականացնեն արտադրական գործընթացները, ներդրումներ կատարեն աշխատուժի վերապատրաստման վրա՝ իրենց հմտությունները կատարելագործելու նպատակով թողարկելու բարձրորակ ապրանքներ և ծառայություններ: Երկարաժամկետ ժամանակահատվածում մրցունակ լինելու համար ընկերություններին անհրաժեշտ են բարձրորակ կրթական համակարգ, որը տալիս է շրջանավարտներ, որոնք աշխատանքի են անցում մասնավոր հատվածում (հենասյուն 5); մրցակցային միջավայր, որը ստիպում է առաջնորդվել առաջինը սպառողների կարիքների և հետաքրքրությունների բավարարմամբ (հենասյուն 6); աշխատուժի շուկան կանոնակարգող ձկուն օրենսդրություն (հենասյուն 7); լավ գործող և զարգացած ֆինանսական շուկաներ՝ ֆինանսավորում ստանալու համար արտադրական գործընթացների արդիականացման և ապրանքների որակի բարելավման նպատակով (հենասյուն 8); նոր տեխնոլոգիաների յուրացման կարողություն (հենասյուն 9); և մեծ արտաքին շուկաներ որպես չօգտագործված հնարավորություն աշխարհով մեկ խստապահանջ սպառողների կարիքների բավարարման համար (հենասյուն 10):

Նկար A2: Մրցունակության 12 հենասյունները



Աղբյուր՝ Համաշխարհային տնտեսական ֆորում, 2007թ.

Զարգացման երրորդ փուլում (նորարարություններով պայմանավորված փուլ) մասնավոր հատվածը պետք է ձգտի պահպանել բարձր կենսամակարդակը և աժող աշխատավարձերի մակարդակը արտադրողականության բարձրացման, հետազոտությունների և մշակումների մեջ մեծ ներդրումներ կատարելու ճանապարհով՝ արտադրելու և շուկա հանելու նորարարական, մեծ արժեք ունեցող գիտելիքատար ապրանքներ և ծառայություններ (հենասյուն 12), որը զուգորդվում է բիզնես գործընթացների ժամանակակից ձևերի և մեթոդների կիրառմամբ, ինչպես նաև լավ մշակված ռազմավարությունների շնորհիվ (հենասյուն 11):

Ի նկատի ունենալով տվյալ երկրի զարգացման փուլը՝ որոշվում է, թե յուրաքանչյուր փուլի հենասյունը ինչ կշիռ է տրվում: Ավելի մեծ կշիռ է տրվում այն հենասյուններին, որոնք մեծ նշանակություն ունեն տվյալ փուլում երկրի զարգացման համար (տես աղյուսակ A1)

Աղյուսակ A1: Յուրաքանչյուր փուլի հենասյունների խմբերին տրվող կշիռները

Փուլ	Հիմնական անհրաժեշտ պայմաններ	Արդյունավետության խթաններ	Ինովացիոն և բիզնես գործառույթների բարդության գործոններ
Ռեսուրսների վրա հիմնված փուլ	60%	40%	20%
Արդյունավետության վրա հիմնված փուլ	35%	50%	50%
Ինովացիայի վրա հիմնված փուլ	5%	10%	30%

Աղբյուր՝ Համաշխարհային տնտեսական ֆորում, 2007թ.

Երկրների դասակարգումը ըստ զարգացման փուլերի արվում է ըստ 2 չափանիշների՝ շուկայական գներով արտահայտված մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ որպես երկրի աշխատավարձերի չափի մոտարկում (տե՛ս աղյուսակ A2) և բազային արտադրանքի մասնաբաժինը երկրի ընդհանուր արտահանման ծավալների մեջ որպես «երկրի ռեսուրսներից կախվածության» մոտարկում (ՀՏՖ, 2007): Եթե երկրի արտահանման ծավալների մեջ հանքարդյունաբեկան և բազային ապրանքների ծավալները գերազանցում են 70%-ը երկիրը համարվում է «ռեսուրսային» փուլում գտնվող: Եթե երկրները ընկնում են երկու զարգացման փուլերի միջև, ապա այդ երկրները համարվում են «անցումային փուլում» գտնվող երկրներ, և կշիռները փոխվում են: Երկրների դասակարգումը ըստ փուլերի ներկայացված է աղյուսակ A3-ում:

Աղյուսակ A2: Յուրաքանչյուր զարգացման փուլի անցումային շեմն ըստ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի

Զարգացման փուլերը	1շնչին բաժին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար)
Փուլ 1: Ռեսուրսների վրա հիմնված	<2,000
Անցում փուլ 1-ից փուլ 2	2,000–3,000
Փուլ 2: Արդյունավետության վրա հիմնված	3,000–9,000
Անցում փուլ 2-ից փուլ 3	9,000–17,000
Փուլ 3: Ինովացիայի վրա	>17,000

Աղբյուր՝ Համաշխարհային տնտեսական ֆորում, 2007թ.

Մրցունակության համաշխարհային ցուցչի հաշվարկի հիմքում ընկած են ինչպես վիճակագրական տվյալներ, այնպես էլ հարցումների արդյունքում ստացված տվյալներ: Հարյուր տասներեք փոփոխականներից 73-ը, որոնք օգտագործվում են ՀՄՑ հաշվարկի մեջ ստացվում են ղեկավարների կարծիքի հարցման արդյունքների հիման վրա, որոնք անցկացնում են ՀՏՖ-ի գործընկեր կազմակերպությունները յուրաքանչյուր երկրում գործող առաջատար օտարերկրյա և տեղական ընկերությունների շրջանում: Հայաստանում ՀՏՖ մրցունակության ցանցի գործընկեր կազմակերպությունն է «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը: Մնացած փոփոխականները միջազգային կառույցների կողմից հրապարակվող վիճակագրական տվյալներն են: Այդ կառույցների թվին են պատկանում Համաշխարհային բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը, Միջազգային հեռահաղորդակցության միությունը, Economist Intelligent Unit-ը, ազգային վիճակագրական ծառայությունները, ԱՄՆ արտոնագրերի և անվանանշանների գրասենյակը, Համաշխարհային առևտրի կազմակերպությունը, Միջազգային աշխատանքի կազմակերպությունը, UNESCO-ի վիճակագրության ինստիտուտը և այլն: Հարցումների արդյունքում ստացված տվյալների հաշվարկի դեպքում օգտագործվում է «շարժվող միջինների» (moving average) մեթոդը (2006թ. և 2007թ. անցկացված հարցումների արդյունքների կշռված միջին):

Աղյուսակ A3: Երկրների ցանկը ըստ զարգացման փուլերի

Փուլ 1	Անցում փուլ 1-ից փուլ 2	Փուլ 2	Անցում փուլ 2-ից փուլ 3	Փուլ 3
Հայաստան	Ալբանիա	Ալժիր	Բահրեյն	Ավստրալիա
Բանգլադեշ	Ադրբեջան	Արգենտինա	Բարբադոս	Ավստրիա
Բենին	Բոսնիա Հերցեգովինա	Բրազիլիա	Խորվաթիա	Բելգիա
Բոլիվիա	Բոսթանա	Բուլգարիա	Չեխիա	Կանադա
Բուրկինա Ֆասո	Չինաստան	Չիլի	Էստոնիա	Կիպրոս
Բուրունդի	Կոլումբիա	Կոստա Ռիկա	Հունգարիա	Դանիա
Կամբոջիա	Էկվադոր	Դոմինիկյան Հանրապետություն	Մալթա	Ֆինլանդիա
Կամերուն	Էլ Սալվադոր	Յամայկա	Կատար	Ֆրանսիա

Փուլ 1	Անցում փուլ 1-ից փուլ 2	Փուլ 2	Անցում փուլ 2-ից փուլ 3	Փուլ 3
Չաղ	Գվատեմալա	Լատվիա	Սլովակիայի Հանրապետություն	Գերմանիա
Եգիպտոս	Հորդանան	Լիտվա	Թայվան, Չինաստան	Հունաստան
Եթովպիա	Ղազախստան	Մակեդոնիա	Տրինիդադ և Տոբագո	Հոնկոնգ
Գամբիա	Քուվեյթ	Մալայզիա		Իսլանդիա
Վրաստան	Լիբիա	Մաուրիտիոս		Իռլանդիա
Գայանա	Օման	Մեքսիկա		Իսրայել
Հոնդուրաս	Սաուդյան Արաբիա	Մոնտենեգրո		Իտալիա
Հնդկաստան	Թունիս	Նամիբիա		Ճապոնիա
Ինդոնեզիա	Ուկրաինա	Պանամա		Կորեա
Քենիա	Վենեսուելա	Պերու		Լյուքսեմբուրգ
Դրոգստան		Լեհաստան		Նիդերլանդներ
Լեսոթո		Ռումինիա		Նոր Զելանդիա
Մադագասկար		Ռուսաստան		Նորվեգիա
Մալի		Սերբիա		Պորտուգալիա
Մաուրիտանիա		Հարավային Աֆրիկա		Պուերտո Ռիկո
Մոլդովա		Սուրինեյմ		Սինգապուր
Մոնղոլիա		Թաիլանդ		Սլովենիա
Մարոկկո		Թուրքիա		Իսպանիա
Մոզամբիկ		Ուրուգվայ		Շվեդիա
Նեպալ				Շվեյցարիա
Նիկարագուա				Միացյալ Արաբական Էմիրություններ
Նիգերիա				Մեծ Բրիտանիա
Պակիստան				ԱՄՆ
Պարագվայ				
Ֆիլիպիններ				
Սենեգալ				
Շրի Լանկա				
Սիրիա				
Տաջիկստան				
Տանզանիա				
Արևելյան Թիմոր				
Ուգանդա				
Ուզբեկստան				
Վիետնամ				
Չամբիա				
Հիմբաբվե				

ՀԱՎԵԼՎԱԾ 4. «Առաջնահերթությունների գտիչի» մեթոդը և կիրառումը

ՀՄԶ-ի մեջ գնահատվող գործոնների ցանկը կիրառվել է այն ոլորտների հատկորոշման համար, որտեղ անհրաժեշտ է միջամտել դրությունը արագ շտկելու համար: Այդ ցանկը բավական ընդգրկուն է և արտացոլում է Համաշխարհային տնտեսական ֆորումի և Որա գիտական փորձագետների փորձառությունը տարբեր երկրների տնտեսությունների գնահատման գրեթե 40-ամյա փորձը: ՀԱՄ զեկույցի համար հիմք ծառայեց այդ ցանկը, սակայն, այն որոշակի փոփոխության ենթարկվեց՝ երկրի առանձնահատկությունները ներառելու նպատակով: Այդ ցանկից մենք նույնականացրեցինք այն գործոնները, որոնք Հայաստանի պարագայում հանդիսանում են մրցակցային թերություններ: Որոշ գործոնների մենք նաև ավելացրեցինք որոշակի մեկնաբանություն (երբեմն ձևափոխելով գործոնի անվանումը)՝ հաշվի առնելով նշված առանձնահատկությունները, ինչպես նաև այդ թերությունները վերացնելուն ուղղված քայլերի ձեռնարկման հնարավորությունները: Այսպիսով՝ մենք նույնականացրեցինք և գնահատեցինք 84 գործոն՝ սկսած լայն մակրոտնտեսականից մինչև ընկերությունների մակարդակով կառավարմանն առնչվող առանձնահատուկ հարցեր: Գնահատումը իրականացվեց գործածելով 4 չափանիշ՝ ռեսուրսային սահմանափակումներ, ունակությունների բաց, ժամանակահատված և տարածման ազդեցություններ: Օգտագործվել է 1-5 գնահատման սանդղակը, գնահատականները այնուհետև կշռվել են ըստ յուրաքանչյուր չափանիշին տրված համապատասխան կշռի և գործոնին վերագրվել է ընդհանուր կշռված արժեք: Այն գործոնները, որոնք ստացել են 3.5-ից բարձր արժեք, ընտրվել են որպես արագ հաղթանակներ: Ներքևում բերված աղյուսակը ցույց է տալիս այդ գնահատման արդյունքները:

N	Մրցակցային թույլ կողմեր	Արագ հաղթանակի զտիչներ								Ընդհ. կշռված արժեք	Առաջնահերթություն
		Ռեսուրսների սահմանափակություն		Ունակությունների բաց		Ժամանակահատված		Տարածման ազդեցություն			
		Կշիռ	0.2	Կշիռ	0.2	Կշիռ	0.35	Կշիռ	0.25		
		Տեղ	Կշռված արժեք	Տեղ	Կշռված արժեք	Տեղ	Կշռված արժեք	Տեղ	Կշռված արժեք		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Դատաիրավական համակարգի անկախություն	4	0.8	2	0.4	1	0.4	3	0.8	2.3	ոչ
2	Պետական պաշտոնյաների որոշումների մեջ կողմնապահության դրսևորում	5	1.0	2	0.4	1	0.4	3	0.8	2.5	ոչ
3	Ընկերությունների բարոյական վարքագիծ	5	1.0	1	0.2	2	0.7	4	1.0	2.9	ոչ
4	Քաղաքական գործիչների հանդեպ հասարակական վստահության մակարդակ	4	0.8	2	0.4	1	0.4	5	1.3	2.8	ոչ
5	Պետական միջոցների ոչ նպատակային օգտագործում	4	0.8	2	0.4	3	1.1	3	0.8	3.0	ոչ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
6	Ֆինանսական ատոլիտի և հաշվետվությունների ներկայացման բարձր չափանիշներ	4	0.8	2	0.4	2	0.7	3	0.8	2.7	նչ
7	Սեփականության իրավունքի պաշտպանություն	4	0.8	4	0.8	1	0.4	4	1.0	3.0	նչ
8	Պետական միջոցների ոչ արդյունավետ օգտագործում	3	0.6	2	0.4	4	1.4	2	0.5	2.9	նչ
9	Պետական կարգավորման բեռ	3	0.6	1	0.2	3	1.1	4	1.0	2.9	նչ
10	Ոստիկանության ծառայությունների հուսալիություն	4	0.8	2	0.4	3	1.1	2	0.5	2.8	նչ
11	Ընկերությունների խորհուրդների գործունեության արդյունավետություն	4	0.8	2	0.4	2	0.7	2	0.5	2.4	նչ
12	Փոքր բաժնեմասով բաժնետերերի շահերի պաշտպանություն	4	0.8	2	0.4	2	0.7	3	0.8	2.7	նչ
13	Օրենսդրական դաշտի արդյունավետություն	4	0.8	2	0.4	2	0.7	4	1.0	2.9	նչ
14	Կառավարության կողմից որոշումների կայացման թափանցիկություն	4	0.8	3	0.6	2	0.7	5	1.3	3.4	նչ
15	Ընդհանուր ենթակառուցվածքների որակ	2	0.4	3	0.6	2	0.7	5	1.3	3.0	նչ
16	Երկաթուղային հաղորդակցության զարգացածություն	2	0.4	3	0.6	3	1.1	4	1.0	3.1	նչ
17	Նավահանգստային ենթակառուցվածքի որակ	1	0.2	1	0.2	3	1.1	5	1.3	2.7	նչ
18	Օդային տրանսպորտի ենթակառուցվածքի որակ	2	0.4	3	0.6	3	1.1	4	1.0	3.1	նչ
19	Էլեկտրաէներգիայի մատակարարման որակ	2	0.4	4	0.8	4	1.4	2	0.5	3.1	նչ
20	Հեռախոսագծերի մատչելիություն	2	0.4	4	0.8	3	1.1	2	0.5	2.8	նչ
21	Օդափոխադրումների ինտենսիվություն (նստատեղեր-կմ)	2	0.4	3	0.6	4	1.4	4	1.0	3.4	նչ
22	Ճանապարհների որակ	3	0.6	4	0.8	2	0.7	4	1.0	3.1	նչ
23	Ավանդների և վարկավորման տոկոսադրույքների տարբերության չափ	3	0.6	3	0.6	5	1.8	5	1.3	4.2	այո

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
24	Արտարժույթի իրական արդյունավետ փոխարժեք	3	0.6	2	0.4	2	0.7	5	1.3	3.0	նչ
25	Մանկական մահացության աստիճան	2	0.4	2	0.4	2	0.7	2	0.5	2.0	նչ
26	Կյանքի միջին տևողություն	2	0.4	3	0.6	1	0.4	3	0.8	2.1	նչ
27	Տարրական դասարաններում ընդգրկվածություն	2	0.4	5	1.0	2	0.7	3	0.8	2.9	նչ
28	Տարրական կրթության որակ	2	0.4	2	0.4	3	1.1	4	1.0	2.9	նչ
29	Կրթության վրա կատարվող ծախսեր / Յամախառն ազգային եկամուտ	2	0.4	3	0.6	4	1.4	4	1.0	3.4	նչ
30	Բուհական համակարգում ընդգրկվածություն	4	0.8	2	0.4	2	0.7	4	1.0	2.9	նչ
31	Աշխատակիցների վերապատրաստման մակարդակ	2	0.4	2	0.4	4	1.4	4	1.0	3.2	նչ
32	Կրթական համակարգի որակ	2	0.4	2	0.4	2	0.7	5	1.3	2.8	նչ
33	Տեղական մասնագիտացված հետազոտական և վերապատրաստման ծառայությունների առկայություն	2	0.4	2	0.4	3	1.1	4	1.0	2.9	նչ
34	Մաթեմատիկայի և բնագիտական առարկաների դասավանդման որակ	2	0.4	3	0.6	2	0.7	4	1.0	2.7	նչ
35	Բիզնես կրթության/ դպրոցների որակ	2	0.4	2	0.4	2	0.7	4	1.0	2.5	նչ
36	Ինտերնետի մատչելիությունը դպրոցներում	3	0.6	4	0.8	4	1.4	4	1.0	3.8	այո
37	Տեղական մրցակցության ինտենսիվություն	3	0.6	2	0.4	2	0.7	5	1.3	3.0	նչ
38	Նուկայում գերիշխող դիրքի առկայություն	3	0.6	2	0.4	3	1.1	4	1.0	3.1	նչ
39	Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետություն	4	0.8	3	0.6	4	1.4	5	1.3	4.1	այո
40	Հարկային քաղաքականության ազդեցություն	3	0.6	3	0.6	4	1.4	5	1.3	3.9	այո
41	Հարկադրույքների մակարդակ	4	0.8	4	0.8	4	1.4	5	1.3	4.3	այո
42	Դեպի սպառող կողմնորոշման աստիճան	4	0.8	2	0.4	3	1.1	5	1.3	3.5	նչ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
43	Սպառողների պահանջների կատարելագործվածության աստիճան	4	0.8	2	0.4	2	0.7	4	1.0	2.9	նչ
44	ՕՈՒՆ-ի տարածվածություն	3	0.6	2	0.4	2	0.7	5	1.3	3.0	նչ
45	Անքսային ընթացակարգերի բեռ	3	0.6	3	0.6	4	1.4	4	1.0	3.6	այո
46	Կանոնների գործարար ազդեցությունը ՕՈՒՆ-ի վրա	4	0.8	3	0.6	4	1.4	3	0.8	3.6	այո
47	Գործատու-աշխատող համագործակցություն	3	0.6	2	0.4	2	0.7	4	1.0	2.7	նչ
48	Աշխատուժի վրա կատարվող ոչ աշխատավարձային ծախսումներ (սոց. վճարներ, եկամտահարկ, ևն.)	3	0.6	4	0.8	4	1.4	3	0.8	3.6	այո
49	Ուղեղների արտահոսք	1	0.2	2	0.4	3	1.1	4	1.0	2.7	նչ
50	Վարկերի ձեռք բերման դյուրիմություն	2	0.4	4	0.8	5	1.8	5	1.3	4.2	այո
51	Ֆոնդային շուկայի զարգացածություն	2	0.4	2	0.4	2	0.7	4	1.0	2.5	նչ
52	Վենչուրային կապիտալի մատչելիություն	3	0.6	1	0.2	3	1.1	3	0.8	2.6	նչ
53	Ֆինանսական շուկայի զարգացվածության աստիճան	3	0.6	3	0.6	2	0.7	5	1.3	3.2	նչ
54	Բանկերի կայունություն	2	0.4	4	0.8	3	1.1	3	0.8	3.0	նչ
55	Ներդրողների իրավունքների պաշտպանվածություն	3	0.6	2	0.4	4	1.4	4	1.0	3.4	նչ
56	Բջջային հեռախոսից օգտվողների քանակ	3	0.6	5	1.0	5	1.8	2	0.5	3.9	այո
57	Ինտերնետից օգտվողների քանակ	3	0.6	4	0.8	4	1.4	5	1.3	4.1	այո
58	Արագագործ ինտերնետի բաժանորդների քանակ	2	0.4	4	0.8	3	1.1	4	1.0	3.3	նչ
59	ՏՀՏ կիրառումը կանոնակարգող օրենսդրություն	2	0.4	2	0.4	5	1.8	5	1.3	3.8	այո
60	ՕՈՒՆ և տեխնոլոգիաների կլանում	3	0.6	2	0.4	2	0.7	5	1.3	3.0	նչ
61	Անհատական համակարգիչների քանակ	2	0.4	4	0.8	4	1.4	4	1.0	3.6	այո
62	Նորագույն տեխնոլոգիաների առկայություն	2	0.4	2	0.4	3	1.1	4	1.0	2.9	նչ
63	Ընկերությունների կողմից տեխնոլոգիաների յուրացում	2	0.4	3	0.6	3	1.1	5	1.3	3.3	նչ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
64	Տեղական շուկայի չափի ինդեքս (ՀՆԱ-արտահանում + ներմուծում)	1	0.2	1	0.2	1	0.4	5	1.3	2.0	նչ
65	Արտահանման ծավալները ՀՆԱ-ի մեջ	2	0.4	2	0.4	2	0.7	5	1.3	2.8	նչ
66	Արտաքին շուկայի չափի ինդեքս	2	0.4	2	0.4	2	0.7	5	1.3	2.8	նչ
67	Տեղական մատակարարների որակ	2	0.4	2	0.4	3	1.1	4	1.0	2.9	նչ
68	Տեղական մատակարարների քանակ	2	0.4	2	0.4	3	1.1	4	1.0	2.9	նչ
69	Արտադրական գործընթացների բարդության աստիճան	2	0.4	1	0.2	2	0.7	5	1.3	2.6	նչ
70	Մարքեթինգային գործիքների օգտագործման աստիճան	2	0.4	2	0.4	4	1.4	5	1.3	3.5	նչ
71	Միջազգային բաշխման ցանցերի վերահսկողության աստիճան	2	0.4	2	0.4	3	1.1	4	1.0	2.9	նչ
72	Պատվիրակելու կամեցողություն	4	0.8	1	0.2	2	0.7	3	0.8	2.5	նչ
73	Մրցակցային առավելության տեսակը	3	0.6	2	0.4	1	0.4	5	1.3	2.6	նչ
74	Արժեքային շրթայի ընդարձակություն	2	0.4	2	0.4	1	0.4	4	1.0	2.2	նչ
75	Զարգացած քլաստերների առկայություն	2	0.4	2	0.4	2	0.7	5	1.3	2.8	նչ
76	Պրոֆեսիոնալ կառավարիչների ներգրավում	3	0.6	1	0.2	2	0.7	4	1.0	2.5	նչ
77	Ընկերությունների կողմից ՀՈՒՄ-ի վրա կատարվող ծախսերի մակարդակ	2	0.4	2	0.4	2	0.7	4	1.0	2.5	նչ
78	Մտավոր սեփականության իրավունքի պաշտպանություն	4	0.8	3	0.6	2	0.7	3	0.8	2.9	նչ
79	Տեխնոլոգիական ապրանքների պետական գնումների քաղաքականություն	2	0.4	3	0.6	5	1.8	4	1.0	3.8	այո
80	Գիտահետազոտական ինստիտուտների որակ	2	0.4	2	0.4	2	0.7	4	1.0	2.5	նչ
81	ԲՈՒՀ-տնտեսություն հետազոտական համագործակցության աստիճան	3	0.6	2	0.4	3	1.1	4	1.0	3.1	նչ
82	Գիտնականների և ճարտարագետների մատչելիություն	2	0.4	2	0.4	2	0.7	4	1.0	2.5	նչ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
83	Արտոնագրերի քանակ	2	0.4	2	0.4	2	0.7	4	1.0	2.5	ոչ
84	Նորարարությունների ունակություններ	2	0.4	2	0.4	2	0.7	5	1.3	2.8	ոչ

Գնահատման չափանիշների բացատրություններ

Ուսուցարային սահմանափակումներ

Լիշ Նշանակությունը

- 5 Թույլ կողմը վերացնելու համար ռեսուրսների ամբողջական մատչելիություն
- 4 Թույլ կողմը վերացնելու համար ռեսուրսների բավարար մատչելիություն
- 3 Թույլ կողմը վերացնելու համար ռեսուրսների մասնակի մատչելիություն
- 2 Թույլ կողմը վերացնելու համար ռեսուրսների շատ սահմանափակ մատչելիություն
- 1 Թույլ կողմը վերացնելու համար ռեսուրսների բացակայություն

Ունակությունների բաց

Լիշ Նշանակությունը

- 5 Ունակությունը լրիվ բավարար է թույլ կողմը վերացնելու համար
- 4 Ունակությունը բավականին բավարար է թույլ կողմը վերացնելու համար
- 3 Ունակությունը մասնակիորեն է բավարար թույլ կողմը վերացնելու համար
- 2 Ունակությունը շատ սահմանափակ է թույլ կողմը վերացնելու համար
- 1 Ունակությունը բավարար չէ թույլ կողմը վերացնելու համար

Ժամանակահատված

Լիշ Նշանակությունը

- 5 Թույլ կողմը կարող է վերացվել 5 տարվա ընթացքում
- 4 Թույլ կողմը կարող է մեծամասամբ վերացվել 5 տարվա ընթացքում
- 3 Թույլ կողմը կարող է մասնակիորեն վերացվել 5 տարվա ընթացքում
- 2 Թույլ կողմը չի կարող մեծամասամբ վերացվել 5 տարվա ընթացքում
- 1 Թույլ կողմը չի կարող վերացվել 5 տարվա ընթացքում

Տարածման ազդեցություն

Լիշ Նշանակությունը

- 5 Թույլ կողմի վերացումը շատ մեծ տարածման ազդեցություն կթողնի ամբողջ տնտեսության վրա
- 4 Թույլ կողմի վերացումը մեծ տարածման ազդեցություն կթողնի ամբողջ տնտեսության վրա
- 3 Թույլ կողմի վերացումը սահմանափակ տարածման ազդեցություն կթողնի ամբողջ տնտեսության վրա
- 2 Թույլ կողմի վերացումը փոքր տարածման ազդեցություն կթողնի ամբողջ տնտեսության վրա
- 1 Թույլ կողմի վերացումը տարածման ազդեցություն չի թողնի ամբողջ տնտեսության վրա